

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
ապրիլի 16-ի նիստի N 17
արձանագրային որոշման

ԲԱՆԱԿՑՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

**Ռոսիո Մալպիկա Վալերա
2015 թ. հունվարի 29**

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ _____-

Փոխառության համաձայնագիր

(Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

Ամսաթիվ՝

, 2015

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ («Փոխառու») և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ («Բանկ») միջև 2015 թ. _____ համաձայնագիր: Փոխառուն և Բանկը սույնով համաձայնում են հետևյալի վերաբերյալ.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- 1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանվում է սույն Համաձայնագրի Հավելվածում) սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են:
- 1.02. Եթե համատեքստն այլ բան չի պահանջում, սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված հասկացություններն կրում են Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում իրենց վերագրված իմաստները:

ՀՈԴՎԱԾ II. ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

- 2.01. Բանկը համաձայն է սույն Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Փոխառուին տրամադրել երեսուն միլիոն Դոլար գումար (\$30,000,000), որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Համաձայնագրի 2.08 Բաժնի դրույթների համաձայն («Փոխառություն»)՝ սույն Համաձայնագրի Լրացում 1-ում նկարագրված ծրագրի («Ծրագիր») ֆինանսավորմանն աջակցելու համար:
- 2.02. Փոխառուն կարող է առհանել Փոխառության միջոցները Ծրագրին օժանդակելու համար՝ սույն Համաձայնագրի Լրացում 2-ի IV Բաժնի համաձայն:
- 2.03. Փոխառուի կողմից վճարման ենթակա Սկզբնավճարը հավասար է Փոխառության գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%):
- 2.04. Փոխառուի կողմից վճարման ենթակա Պարտավճարը հավասար է Փոխառության Չառհանված մնացորդի տարեկանմեկ քառորդ տոկոսին (0.25%):
- 2.05. Փոխառուի կողմից Տոկոսագումարի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարման ենթակա տոկոսագումարը հավասար է Փոխառության արժույթի համար սահմանված Կողմնորոշիչ դրույքաչափի և Փոփոխական սպրեդի գումարին՝ հաշվի առնելով, որ Փոխառության ամբողջ մայր գումարի կամ դրա մի մասի փոխարկման դեպքում Փոխառուի կողմից Փոխարկման ժամանակահատվածում այդ գումարի համար վճարման ենթակա տոկոսագումարը որոշվում է Ընդհանուր պայմանների IV Հոդվածի համապատասխան դրույթների համաձայն: Չնայած վերոշարադրյալին, եթե Փոխառության Առհանված մնացորդի որևէ գումար ժամկետը լրանալիս չի վճարվում և վճարումը շարունակում է չկատարվել երեսունօրվա ընթացքում, Փոխառուի կողմից վճարման ենթակա տոկոսագումարը հաշվարկվում է Ընդհանուր պայմանների 3.02-րդ Բաժնի (ե) կետում նախատեսված կարգով:
- 2.06. Վճարման Ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը և հոկտեմբերի 1-ը:

2.07. Փոխառության մայր գումարը վերադարձվում է սույն Համաձայնագրի Լրացում 3-ում սահմանված մարման ժամանակացույցի համաձայն:

2.08. (ա) Պարտքի շրջահայաց կառավարումը դյուրացնելու նպատակով Փոխառուն կարող է ցանկացած պահի դիմել Փոխառության պայմանների հետևյալ Փոխարկումներից ցանկացածը կատարելու համար՝ (i) Փոխառության մայր գումարի առհանված կամ չառհանված

գումարն ամբողջությամբ կամ դրա մի մասի Փոխառության Արժույթի փոփոխությունը՝ Հաստատված Արժույթի և (ii) տոկոսադրույքի բազայի փոփոխությունը, որը կիրառվում է՝ (Ա) Փոխառության մայր գումարի առհանված և չմարված ամբողջ գումարի կամ դրա մի մասի նկատմամբ՝ Փոփոխական Դրույքաչափից Հաստատագրված Դրույքաչափի կամ հակառակը, կամ (Բ) Փոխառության մայր գումարի առհանված և չմարված ամբողջ գումարի կամ դրա մի մասի նկատմամբ՝ Կողմնորոշիչ Դրույքաչափի վրա հիմնված Փոփոխական Դրույքաչափից և Փոփոխական Սպրեդից Հաստատագրված Կողմնորոշիչ Դրույքաչափի վրա հիմնված Փոփոխական Դրույքաչափի կամ հակառակը կամ (Գ) Փոխառության մայր գումարի առհանված և չմարված գումարն ամբողջությամբ՝ Փոփոխական Սպրեդի վրա հիմնված Փոփոխական Դրույքաչափից Հաստատագրված Սպրեդի վրա հիմնված Փոփոխական Դրույքաչափի և (iii) Վարկի մասհանված ամբողջ մայր գումարի և դրա մնացորդի կամ ցանկացած մասի նկատմամբ կիրառելի փոփոխական դրույքաչափի կամ տեղեկատու դրույքաչափի սահմանաչափերի սահմանում փոփոխական դրույքաչափի կամ տեղեկատու դրույքաչափի նկատմամբ տոկոսադրույքի քեփի կամ տոկոսադրույքի քուլարի սահմանման միջոցով:

(բ) Սույն բաժնի «ա» պարբերության համաձայն խնդրարկված ցանկացած փոխարկում, որն ընդունվում է Բանկի կողմից, համարվում է «Փոխարկում» Ընդհանուր պայմաններում սահմանված կարգով և կատարվում է Ընդհանուր պայմանների IV հոդվածի և Փոխարկումների ուղեցույցի դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Փոխառուն հայտարարում է Ծրագրի նպատակին իր հավատարմության մասին: Այդ նպատակով Փոխառուն իրականացնում է Ծրագիրը ՀՄՆՀ միջոցով՝ Ծրագրի համաձայնագրի, Ղեկավար ձեռնարկի և Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթներին համապատասխան:

3.02. Առանց սույն Համաձայնագրի 3.01 Բաժնի դրույթները սահմանափակելու և բացառությամբ այն դեպքի, երբ այլ համաձայնություն է ձեռքբերվում Փոխառուի և Բանկի միջև, Փոխառուն ապահովում է Ծրագրի իրականացումը սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV. ԲԱՆԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

4.01. Կասեցման Լրացուցիչ դեպքերը բաղկացած են հետևյալից, մասնավորապես՝ որ ՀՄՆՀ օրենսդրության փոփոխությունը, կասեցումը, չեղյալ համարումը, ուժը կորցրած ճանաչումը կամ դրանից հրաժարումը, ինչը Բանկի կարծիքով էապես և անբարենպաստ

ձևով է անդրադառնում ՀՄՆՀ-ի՝ Ծրագրի Համաձայնագրի շրջանակում իր որևէ պարտավորությունը կատարելու ունակության վրա:

4.02. Արագացման Լրացուցիչ դեպքը բաղկացած է հետևյալից՝ մասնավորապես, որ սույն Համաձայնագրի 4.01 Բաժնում սահմանված ցանկացած դեպք տեղի 1 ունենում և շարունակվում է դեպքի մասին Փոխառուի կողմից Բանկին ծանուցելուց հետո 60 օրվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ V. ՈՒԺԻՄԵԶՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.01. Ուժի մեջ մտնելու Լրացուցիչ պայմանը բաղկացած է հետևյալից՝

(ա) Իրականացման Համաձայնագիրը կնքվել է Փոխառուի և ՀՄՆՀ անունից՝ Բանկի համար ընդունելի ձևով:

(բ) Ղեկավար ձեռնարկը վերանայվել և ընդունվել է ՀՄՆՀ-ի կողմից՝ Բանկի համար բավարար ձևով:

5.02. Լրացուցիչ Իրավաբանական հարցը կազմված է հետևյալից, մասնավորապես, որ Իրականացման Համաձայնագիրը պատշաճ կերպով լիազորվել կամ վավերացվել է Փոխառուի և ՀՄՆՀ-ի կողմից և իրավաբանորեն պարտադիր է Փոխառուի և ՀՄՆՀ-ի համար՝ համաձայն դրա պայմանների:

5.03. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ամսաթվին հաջորդող (180) օրն է:

ՀՈԴՎԱԾ VI. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՀԱՍՑԵՆԵՐ

6.01. Փոխառուի ներկայացուցիչը նրա Ֆինանսների նախարարն է:

6.02. Փոխառուի հասցեն է՝
Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարություն
Մելիք-Ադամյան փողոց 1
Երևան, 0010
Հայաստանի Հանրապետություն
Տելեքս՝

243331 LADA SU

Ֆաքս՝

374 60700358

6.03. Բանկի հասցեն է՝

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
1818 H Փողոց, N.W.
Վաշինգտոն, D.C. 20433

Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Հեռախոսիս`	Տեղեքս`	Ֆաքս`
INTBAFRAD Washington, D.C.	248423(MCI) կամ 64145(MCI)	1-202-477-6391

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է _____ վերոնշյալ
առաջին ամսաթվի և տարեթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ`

Լիազոր ներկայացուցիչ

Անունը` _____

Պաշտոնը` _____

**ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ`**

Լիազոր ներկայացուցիչ

Անունը` _____

Պաշտոնը` _____

ԼՐԱՑՈՒՄ 1

Ծրագրի նկարագրություն

Ծրագրի նպատակը համայնքային և միջհամայնքային ենթակառուցվածքի որակի և հասանելիության բարելավումն է:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

Մաս Ա. Տեղական մակարդակով սոցիալ-տնտեսական զարգացմանն ու կարողությունների ստեղծմանն օժանդակություն

1. Համայնքային միկրոծրագրերի իրականացումը (Միկրոծրագրեր)՝ Ծրագրի իրականացման հանձնաժողովների («ԾԻՀ-եր») աջակցությամբ, ներառյալ, ի թիվս այլոց՝
(i) կրթական, առողջապահական և սոցիալական ծառայություններ (օրինակ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, առողջապահական կլինիկաներ, համայնքային կենտրոններ, մարզադահլիճներ և խաղահրապարակներ)ապահովող հիմնական սոցիալական ենթակառուցվածքների կառուցում, վերանորոգում, հիմնանորոգում և /կամ ընդլայնում,
(ii) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեղադրում/հիմնանորոգում և (iii) ոռոգման և գյուղերում էլեկտրիֆիկացման փոքր աշխատանքների իրականացում:
2. (i) Տեխնիկական աջակցության տրամադրում՝ Միկրոծրագրերի պատշաճ նախագծումն ու վերահսկողությունը ապահովելու համար և (ii) համայնքային մակարդակում ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների ստեղծում:
3. Ենթակառուցվածքներին ուղղված ներդրումների շահառու Միկրոծրագրերի, օրինակ՝ հիմնանորոգված դպրոցների, մանկապարտեզների և համայնքային կենտրոնների, ինչպես նաև այլ սոցիալական ենթակառուցվածքների՝ ըստ Ղեկավար ձեռնարկում նշված չափանիշների, ապահովում գույքով և սարքավորումներով:

Մաս Բ. Միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման նախաձեռնություններին օժանդակություն

1. Փոխառուի տարածքային բարեփոխումների սատարումը՝ զարգացման նորարարական նախաձեռնությունների (Ենթածրագրերի) իրականացման միջոցով, որոնցում ներգրավված են երկու կամ ավելի համայնքներ, հետևյալ ձևով.
 - ա) Ենթածրագրերի ծրագրի նախագծում.
 - բ) Ենթածրագրերի իրականացման փորձարկում՝ փորձի ձևավորման և իրականացման մոդելների ստացման համար և
 - գ) Ենթածրագրերի հետագա իրականացման ընդլայնում՝ բոլորն էլ Ղեկավար ձեռնարկում սահմանված ժամանակացույցի համաձայն:
2. (i) Տեխնիկական աջակցության տրամադրում՝ Ենթածրագրերի պատշաճ նախագծում և վերահսկողություն ապահովելու նպատակով և (ii) համայնքային մակարդակով ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների ստեղծում:

3. Գույքի և սարքավորումների տրամադրում ենթակառուցվածքի ներդրումների շահառուի ենթածրագրերին:

Մաս Գ. Ինստիտուցիոնալ հզորացում և ծրագրի կառավարում

Ինստիտուցիոնալ օժանդակության ապահովում, կարողությունների ստեղծում (այդ թվում՝ դրամահավաք իրականացնելու կարողություն) և տեխնիկական աջակցություն ՀՆԱՀ-ին՝ Ծրագրի կառավարման, ֆիդուցիառ վերահսկողության (այդ թվում՝ Ծրագրի աուդիտներ), երաշխիքների վերահսկողության համար, այդ թվում՝ վերապատրաստման անցկացում և դրա համար պահանջվող Գործառնական ծախսերի ապահովում:

ԼՐԱՑՈՒՄ 2

Ծրագրի իրականացում

Բաժին I. Իրականացման մեխանիզմներ

Ա. Իրականացման համաձայնագիր և ինստիտուցիոնալ մեխանիզմներ

1. Ծրագրի իրականացման նպատակով Փոխառուն Փոխառության միջոցները տրամադրում է ՀՄՆՀ-ին՝ Փոխառուի և ՀՄՆՀ-ի միջև իրականացման համաձայնագրի համաձայն՝ Բանկի համար բավարար պայմաններով («Իրականացման համաձայնագիր»):
2. Փոխառուն իրականացման համաձայնագրի շրջանակում իրականացնում իր իրավունքները և կատարում իր պարտականությունները՝ այնպես, որ պաշտպանվեն Փոխառուի և Բանկի շահերը և իրագործվեն Փոխառության նպատակները: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ ձեռք կրելով համաձայնություն, Փոխառուն չպետք է փոխանցի, փոխի, անվավեր ճանաչի, դադարեցնի, հրաժարվի կամ չկիրառի Իրականացման համաձայնագիրը կամ դրա որևէ դրույթ:

Բ. Հակակոռուպցիոն միջոցներ

Փոխառուն պետք է և պետք է ապահովի, որ ՀՄՆՀ-ն Ծրագիրն իրականացնի Հակակոռուպցիոն Ուղեցույցի դրույթների համաձայն:

Գ. Երաշխիքներ

1. Փոխառուն ապահովում է ՀՄՆՀ-ի կողմից հետևյալ միջոցառումների իրականացումը՝

(ա) Եթե Ծրագրում ներառված որևէ միջոցառում, ԲՍԿԾ-ի համաձայն, պահանջում է ԲԿՊ-ի իրականացում, այդպիսի միջոցառման համար աշխատանքներ չեն գնվի քանի դեռ և մինչև.

(i) այդպիսի միջոցառումների համար ԲԿՊ-ը. (Ա) կազմվի Բանկի համար բավարար եղանակով և ԲՍԿԾ համաձայն, (Բ) հրապարակվի և քննարկվի տեղական շահակիցների հետ՝ ԲՍԿԾ-ով պահանջվող կարգով և (Գ) ներառվի մրցութային փաստաթղթերում (Բանկի համար ընդունելի ձևով) և

(բ) Եթե Ծրագրի Մաս Բ.1-ի շրջանակում Ենթաձրագրերն ընդգրկող որևէ միջոցառումՏԲՇ համաձայն պահանջիՏԳԾ իրականացում, այդպիսի միջոցառումների համար աշխատանքներ չպետք է գնվեն քանի դեռ և մինչև .

(i) այդպիսի միջոցառումների համար՝ (Ա) Բանկի համար ընդունելի ձևով և ՏԲՇ պահանջներին համապատասխանողՏԳԾ կազմվի և (Բ) հրապարակվի՝ ՏԲՇ պահանջվող կարգով և

(ii) (Ա) բոլոր միջոցները, որոնք պահանջվում է ձեռնարկել նշված ՏԳԾ շրջանակում նախքան նշված միջոցառումների համար որևէ աշխատանքների մեկնարկը, այդ թվում, առանց վերոնշյալը սահմանափակելու, Տարաբնակեցման համար փոխհատուցման և աջակցության համար միջոցների տրամադրումը, երբ և եթե պահանջվի ՏԳԾ շրջանակում, (Բ) կազմվում և Բանկին է ներկայացվում նշված ՏԳԾ պահանջներին հանապատասխանության կարգավիճակի վերաբերյալ զեկույց, Բանկի բավարարող ձևով և բովանդակությամբ և (Գ) Բանկը հաստատել է, որ նշված միջոցառումները կարելի է սկսել:

(a) Փոխառուն ապահովում է, որ Ծրագրի միջոցառումներն իրականացվեն՝ համապատասխան ԲԿՊ և ՏԳԾ-ի համաձայն (Ենթաձրագրերի հետ կապված)՝ ըստ կիրառելիության:

Բաժին II. Ծրագրի մոնիթորինգ, հաշվետվությունների ներկայացում և գնահատում

Ա. Ֆինանսական կառավարում, Ֆինանսական հաշվետվություններ և Աուդիտներ

1. Փոխառուն վարում է կամ հանձնարարում է վարել ֆինանսական կառավարման համակարգ՝ Ընդհանուր պայմանների 5.09 Բաժնի դրույթների համաձայն:
2. Փոխառուն ապահովում է, որ ՀՄՆՀ-ն, ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացույցային կիսամյակի ավարտից քառասունհինգ օրվա ընթացքում կազմի և Բանկին ներկայացնի աուդիտով չհաստատված միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ՝ Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ:
3. Փոխառուն ապահովում է իր ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացումն Ընդհանուր պայմանների 5.09 (բ) Բաժնի դրույթների համաձայն: Ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր աուդիտ պետք է ընդգրկի Փոխառուի մեկ ֆինանսական տարվա ժամանակահատված: Յուրաքանչյուր այդպիսի ժամանակահատվածի աուդիտով հաստատված ֆինանսական հաշվետվությունները Բանկին են ներկայացվում ոչ ուշ, քան այդպիսի ժամանակահատվածի ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

Բաժին III. Գնումներ

Ա. Ընդհանուր

1. **Ապրանքներ, աշխատանքներ և ոչ խորհրդատվական ծառայություններ:** Ծրագրի համար պահանջվող և Փոխառության միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները պետք է գնվեն Գնումների ուղեցույցի I Բաժնում սահմանված կամ նշված պահանջների և սույն Բաժնի դրույթների համաձայն:
2. **Խորհրդատվական ծառայություններ:** Ծրագրի համար պահանջվող և Փոխառության միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր խորհրդատվական

ծառայությունները պետք է գնվեն Խորհրդատուի ուղեցույցի I և IV բաժիններում սահմանված կամ նշված պահանջների և սույն Բաժնի դրույթների համաձայն:

3. **Սահմանումներ:**Ստորև՝ սույն բաժնում մեծատառով նշված հասկացությունները, որոնք օգտագործվում են գնումների առանձին մեթոդներ կամ Բանկի կողմից առանձին պայմանագրերի դիտարկման մեթոդներ նկարագրելու համար, վերաբերում են Գնումների ուղեցույցի II և III Բաժիններում կամ Խորհրդատուի ուղեցույցի II, III, IV և V Բաժիններում նկարագրված համապատասխան մեթոդին՝ ելնելով հանգամանքներից:

Բ. Ապրանքների, Աշխատանքների և Ոչ խորհրատվական ծառայությունների գնման առանձին մեթոդներ

1. **Միջազգային մրցակցային սակարկություն:** Բացառությամբ ստորև՝ 2-րդ կետում նախատեսված դեպքերի՝ ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները գնվում են Միջազգային մրցակցային սակարկությունների հիման վրա շնորհված պայմանագրերով:

2. **Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրատվական ծառայությունների գնման այլ մեթոդներ:** Միջազգային մրցակցային սակարկություններից բացի, Գնումների պլանում սահմանված պայմանագրերի համար ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրատվական ծառայությունների գնման համար կարող են օգտագործվել հետևյալ մեթոդները.

Գնման մեթոդ	
(ա)	Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման համար կարող է կիրառվել Փոխառուի Ազգային մրցակցային սակարկությունը՝ հետևյալ դրույթների կատարման պայմանով. (i) կազմակերպությունները, որոնց բաժնեմասերի 50 տոկոսից ավելին Փոխառուի սեփականությունն է, չպետք է ստանան Փոխառուի համար կազմակերպվող մրցույթներին մասնակցելու հրավեր՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք իրավաբանորեն և ֆինանսապես ինքնուրույն են և կարող են ներկայանալ որպես այդպիսին և գործում են առևտրային իրավունքի շրջանակներում. (ii) հետորակավորման չափանիշները վերաբերում են բացառապես հայտատուների անցյալ պայմանագրային կատարողականին, ֆինանսական, կառավարման և տեխնիկական կարողություններին. (iii) համատեղ ձեռնարկության գործընկերները համապարտ

Գնման մեթոդ	
	պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների համար.
(iv)	Պայմանագրերի հաշվարկված գների չպետք է հայտարարվեն.
(v)	որևէ հայտ չի կարող մերժվել հայտերի բացման ժամանակ: Բացման ընթացակարգերը պետք է համապատասխանեն Գնումների Ուղեցույցի 2.45 բաժնի պահանջներին.
(vi)	որևէ հայտ չպետք է մերժի բացառապես հաշվարկված գինը գերազանցելու պատճառով: Հայտերը կարող են չեղյալ հայտարարվել, և նոր հայտերներ կայացնելու հրավեր կարող է տրվել միայն այն դեպքում, եթե բավարարվում են Գնումների ուղեցույցի 2.61-րդ և 2.64-րդ կետերի պայմանները.
(vii)	հայտի գնահատման բոլոր չափանիշները պետք է չափելիլին են դրամական արտահայտությամբ կամ արտահայտված լինեն բավարար/անբավարար չափանիշի տեսքով,
(viii)	Առանց Գնումների ուղեցույցի Հավելված 1-ի 3-րդ կետի սահմանափակման՝ իրականացման ընթացքում պայմանագրի գործողության շրջանակի կամ պայմանների ցանկացած փոփոխության համար պահանջվում է Բանկի նախնական համաձայնությունը:
(բ)	Գնանշման հարցում
(գ)	Շրջանակային համաձայնագիր
(դ)	Ուղղակի պայմանագրի կնքում
(ե)	Համայնքի մասնակցությունը գնմանը

Գ. խորհրդատուների ծառայությունների գնման առանձին մեթոդներ

- Որակի և գնի վրա հիմնված ընտրություն:** Բացառությամբ ստորև՝ 2-րդ կետով նախատեսված դեպքերի, խորհրդատվական ծառայությունները պետք է գնվեն որակի և գնի վրա հիմնված ընտրության հիման վրա շնորհված պայմանագրերի շրջանակում:
- խորհրդատվական ծառայությունների գնման այլ մեթոդներ:** Որակի և գնի վրա հիմնված ընտրությունից զատ, հետևյալ մեթոդները կարող են օգտագործվել Գնումների պլանում նշված պայմանագրերի համար խորհրդատվական ծառայությունների գնման համար.

<u>Ընտրության մեթոդ</u>
(ա) Որակի վրա հիմնված ընտրություն
(բ) Հաստատագրված բյուջեով ընտրություն
(գ) Նվազագույն գնի ընտրություն
(դ) Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն
(ե) Խորհրդատվական ընկերությունների ընտրություն՝ մեկ աղբյուրի սկզբունքով
(զ) Անհատ խորհրդատուների ընտրության համար Խորհրդատուների ուղեցույցի 5.1-5.6 կետերում նշված ընթացակարգեր
(է) Անհատ Խորհրդատուների ընտրության Մեկ աղբյուրի ընթացակարգեր

Դ. Բանկի կողմից գնումների մասին որոշումների դիտարկում

Գնումների պլանում նշվում են այն պայմանագրերը, որոնք Բանկի կողմից ենթակա են Նախնական դիտարկման: Բոլոր մյուս պայմանագրերը ենթակա են Բանկի կողմից Հետդիտարկման:

Բաժին IV. Փոխառության գումարների առհանումը

A. Ընդհանուր

1. Փոխառուն կարող է առհանել Փոխառության գումարները Ընդհանուր պայմանների II հոդվածի դրոյթների, սույն Բաժնի և այնպիսի այլ լրացուցիչ ցուցումների համաձայն, որոնք Բանկը կներկայացնի Փոխառուին գրավոր ծանուցման միջոցով (ներառյալ 2006 թ. մայիսի՝ «Համաշխարհային բանկի ծրագրերի համար վճարումների ուղեցույցը», որը պարբերաբար վերանայվում է Բանկի կողմից և տարածվում սույն Համաձայնագրի վրա՝ այդպիսի ցուցումների համաձայն), Ընդունելի ծախսերը ֆինանսավորելու համար, ինչպես սահմանված է ստորև՝ 2-րդ կետում բերված աղյուսակում:
2. Ստորև աղյուսակում նշվում են Ընդունելի ծախսերի այն խմբերը, որոնք կարող են ֆինանսավորվել Փոխառության միջոցների հաշվին (Խումբ), Փոխառության գումարների հատկացումը յուրաքանչյուր Խմբին և յուրաքանչյուր Խմբում ֆինանսավորման ենթակա Ընդունելի ծախսերի տոկոսը:

Խումբ	Փոխառության հատկացված գումարը (արտահայտված ԱՄՆ դոլարով)	Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոսը (ներառյալ հարկերը)

(1) Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատվական ծառայություններ՝ Ծրագրի Ա մասի շրջանակում	17 600 000	72.15%
(2) Աշխատանքներ, ապրանքներ և խորհրդատվական ծառայություններ՝ Ծրագրի Բ մասի շրջանակում	10 100 000	75.00
(3) Ապրանքներ, խորհրդատվական ծառայություններ (այդ թվում՝ ծրագրի աուդիտի համար) և ուսուցում Ծրագրի Գ մասի շրջանակում	573 000	72.45%
(4) Գործառնական ծախսերը Ծրագրի Գ մասի շրջանակում	1 652 000	50%՝ մինչև 2015 թ. դեկտեմբերի 31-ը 45%՝ 2016 թ. հունվարի 1-ից սկսած 2016 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ 40%՝ 2017 թ. հունվարի 1-ից սկսած 2017 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ 35%՝ 2018 թ. հունվարի 1-ից սկսած 2018 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ և այնուհետև՝ 30% -----
(3) Սկզբնավճար	75 000	Սույն Համաձայնագրի 2.03 Բաժնի համաձայն վճարման ենթակա գումար՝ ըստ Ընդհանուր պայմանների 2.07 (բ) Բաժնի
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	30 000 000	

Բ. Առհանման պայմաններ, առհանման ժամկետ

1. Չնայած սույն բաժնի Ա մասի դրույթներին՝ առհանում չպետք է կատարվի.
 - (ա) սույն Համաձայնագրի ամսաթվից առաջ կատարված վճարումների համար, բացառությամբ մինչև 3 000 000 ԱՄՆ \$ (երեք միլիոն դոլար) ընդհանուր գումարը չգերազանցող առհանումների, որ կարող են կատարվել նախքան սույն

ամսաթիվը կատարված վճարումների համար, բայց ոչ 2014 թ. նոյեմբերի 20-ին կամ դրանից հետո, հետևյալ Ընդունելի Ծախսերի համար՝ (i) մինչև 2800000 ԱՄՆ\$ չգերազանցող գումար՝ սույն Բաժնի Ա.2 կետում նկարագրված Աղյուսակի (1)Խմբի և [(ii) մինչև 200000 ԱՄՆ\$ չգերազանցող գումար՝ (4)Խմբի ներքո:

(բ) (2) Խմբի շրջանակում, բացառությամբ այն դեպքի, երբ ՀՄՆՀ Բանկի համար բավարար փաստեր է ներկայացրել Ղեկավար Ձեռնարկի վերանայման վերաբերյալ, ինչպես նշվում է Ծրագրի Համաձայնագրի I. B. 2 Բաժնում:-

2. Փակման ամսաթիվը 2020 թ. հունիսի 30-ն է:

ԼՐԱՑՈՒՄ 3

Մարման ժամանակացույց

1. Ստորև՝ աղյուսակում, սահմանված են Փոխառության Մայր գումարի Վճարման Ամսաթվերը և Փոխառության ընդհանուր Մայր գումարի՝ Վճարման յուրաքանչյուր ամսաթվին վճարման ենթակա տոկոսը(Մասնավճար): Եթե Փոխառության միջոցներն ամբողջությամբ առհանվել են Վճարման առաջին ամսաթվի դրությամբ, ապա Փոխառուի կողմից Մայր գումարի Վճարման յուրաքանչյուր ամսաթվին վերադարձման ենթակա Մայր գումարի չափը որոշվում է Բանկի կողմից՝ բազմապատկելով (ա) Մայր գումարի Վճարման առաջին ամսաթվի դրությամբ առհանված Փոխառության Մնացորդը (բ) Մայր գումարի Վճարման յուրաքանչյուր ամսաթվի համար սահմանված Մասնավճարով, ըստ անհրաժեշտության, վերադարձման ենթակա այդ գումարի ճշգրտմամբ՝ նվազեցնելով սույն Լրացման 4-րդ կետում նշված այն գումարները, որոնց վրա տարածվել է Արժույթի Փոխարկումը:

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Մասնավճար (տոկոսային արտահայտությամբ)
Յուրաքանչյուր ապրիլի 1 -ին և հոկտեմբերի 1-ին սկսած՝ 2029 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2039 թ. ապրիլի 1-ը	4.76 %
2039 թ. հոկտեմբերի 1-ին	4.80 %

2. Եթե Մայր գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ Փոխառության միջոցներն ամբողջությամբ չեն առհանվել, Փոխառուի կողմից Մայր Գումարի վճարման յուրաքանչյուր Ամսաթվին վերադարձման ենթակա գումարը որոշվում է հետևյալ կերպ.

(ա) Եթե Մայր գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ Փոխառության միջոցներն առհանվել են, ապա Փոխառուն վերադարձնում է Վարկի Առհանված Մնացորդն այդ ամսաթվի դրությամբ՝ սույն Լրացման 1-ին կետի համաձայն:

(բ) Մայր գումարի վճարման առաջին ամսաթվից հետո առհանված ցանկացած գումար պետք է վերադարձվի Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին, որը հաջորդում է այդ առհանման օրվան, Բանկի կողմից որոշված գումարներով՝ յուրաքանչյուր այդպիսի առհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչը սկզբնական մասնավճարն է, ինչպես նշված է սույն Լրացման 1-ին կետի աղյուսակում, Մայր գումարի վճարման տվյալ ամսաթվի համար (Սկզբնական մասնավճար), իսկ հայտարարը՝ այդ ամսաթվի դրությամբ կամ դրանից հետո ընկնող Մայր գումարի վճաչման ամսաթվերին վճարման ենթակա

բոլոր մնացած մասնավճարների հանրագումարն է. ըստ անհրաժեշտության, վերադարձման ենթակա այդ գումարները ենթակա են ճշգրտման՝ սույն Լրացման 4-րդ կետում նշված այն գումարները հանելու համար, որոնց նկատմամբ կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. (ա) Մայր գումարի վճարման ցանկացած ամսաթվին նախորդող երկու օրացուցային ամսվա ընթացքում Փոխառության առհանված գումարները՝ բացառապես Մայր գումարի վճարման ցանկացած Ամսաթվին վճարման ենթակա գումարների չափը հաշվարկելու նպատակով, համարվում են առհանված և չմարված՝ առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի վճարման երկրորդ Ամսաթվի դրությամբ, և պետք է վերադարձվեն Մայր գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին՝ սկսած առհանման ամսաթվին հաջորդող Մայր գումարի վճարման երկրորդ ամսաթվից:
 - (բ) Չնայած սույն կետի (ա) ենթակետի դրույթներին, եթե Բանկը ցանկացած ժամանակ ընդունի հաշիվների ներկայացման ժամկետային համակարգ, որով հաշիվ-ապրանքագրերը տրվում են Մայր գումարի վճարման համապատասխան ամսաթվի դրությամբ կամ դրանից հետո, այդ ենթակետի դրույթներն այլևս չեն տարածվի նման համակարգի ներդրումից հետո կատարված առհանումների վրա:
4. Չնայած սույն Լրացման 1-ին և 2-րդ կետերի դրույթներին՝ Փոխառության Առհանված ամբողջ մնացորդի կամ դրա որևէ մասի արժույթը Հաստատված արժույթի փոխարկելու դեպքում նման եղանակով Հաստատված արժույթի փոխարկված գումարը, որը ենթակա է վերադարձման Փոխարկման ժամանակահատվածում ընկնող Մայր գումարի վճարման ցանկացած ամսաթվին, պետք է որոշվի Բանկի կողմից՝ բազմապատկելվայդ գումարը անմիջապես նախքան փոխարկումը սահմանված իր արժույթով (i) կամ այն փոխարժեքով, որն արտացոլում է Փոխարկմանն առնչվող Արժույթի հեջավորման գործարքի շրջանակում Հաստատված արժույթով Բանկին վճարման ենթակա մայր գումարի մասնաբաժինները, կամ (ii) եթե Բանկն այդպես որոշի, Փոխարկման ուղեցույցին համապատասխան՝ հաշվարկային դրույքաչափի (screen rate) փոխարժեքի բաղադրիչով:
5. Եթե Առհանված Փոխառության մնացորդն արտահայտված է Փոխառության մեկից ավելի արժույթներով, սույն Լրացման դրույթներն առանձին տարածվում են Փոխառության յուրաքանչյուր Արժույթով արտահայտված գումարի վրա, որպեսզի այդպիսի յուրաքանչյուր գումարի համար կազմվի մարման առանձին ժամանակացույց:

ՀԱՎԵԼՎԱԾ

Բաժին I. Սահմանումներ

1. «Հակակոռուպցիոն ուղեցույց» նշանակում է՝ «ՎՋՄԲ փոխառություններով և ՄՋԸ վարկերով ու դրամաշնորհներով ֆինանսավորվող ծրագրերի իրականացման ընթացքում խարդախության և կոռուպցիայի կանխարգելման և դրանց դեմ պայքարի վերաբերյալ ուղեցույց», որը թվագրված է 2006 թ. հոկտեմբերի 15-ով և փոփոխվել է 2011 թ. հունվարին:

2. «ՀՍՆՀ» կամ «Ծրագրի իրականացման մարմին» նշանակում է «Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ» կամ դրա իրավահաջորդը, որն ընդունելի է Բանկի համար՝ ստեղծված որպես ՀՍՆՀ օրենսդրությանը համապատասխանող իրավաբանական անձ:

3. «ՀՍՆՀ օրենսդրություն» նշանակում է Փոխառուի 2000 թ. ապրիլի 11-ի թիվ 162, 2006 թ. հունիսի 8-ի թիվ 722-Ա, 2014 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1521-Ն որոշումները, ՀՍՆՀ-ի կանոնադրությունը և ՀՍՆՀ-ի ստեղծման և գործունեության հետ առնչվող լրացուցիչ ցանկացած կարգեր:

4. «Ընդունելի Շահառու» նշանակում է, ի թիվս այլոց, որևէ համայնք, քաղաքային համայնք, մարզ, համայնքահեն կազմակերպություն, ավագանի և դպրոցի խորհուրդ, որը համապատասխանում է Ղեկավար ձեռնարկում սահմանված՝ նշվածի չափանիշներին Միկրոծրագրի կամ Ենթածրագրի շահառու լինելու համար:

5. «Խումբ» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման IV Բաժնի աղյուսակում նշված խումբը:

6. «Խորհրդատուի ուղեցույց» նշանակում է 2011 թ. հունվարի (2014 թ. հուլիսին վերանայված) «Ուղեցույց. ՎՋՄԲ փոխառությունների և ՄՋԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակում Համաշխարհային բանկի Փոխառումների կողմից խորհրդատուների ընտրություն և ներգրավում»:

7. «ԲՍԿԾ» նշանակում է Բանկի համար ընդունելի՝ 2014 թ. հոկտեմբերի 24-ի Բնապահպանական և Սոցիալական կառավարման ծրագիր, որը կազմվել և ընդունվել է ՀՍՆՀ-ի կողմից և հրապարակվել է 2014 թ. հոկտեմբերի 31-ին և 2014 թ. նոյեմբերի 14-ին՝ Բանկի «InfoShop»-ում և հիշատակվում է սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման I.E.1 Բաժնի (ա) (i) կետում և բավարարում է Բանկին՝ նկարագրելով Ծրագրի միջոցառումների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կանոնները, ուղեցույցերը և ընթացակարգերը և սահմանելով շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցությունների նվազեցման, մեղմման կամ չեզոքացման և Ծրագրի միջոցառումների դրական ազդեցությունների ավելացման միջոցները, որոնք ժամանակ առ ժամանակ պետք է փոփոխվեն՝ Բանկի նախնական համաձայնությամբ:

8. «ԲԿՊ» նշանակում է որևէ վայրին վերաբերող Բնապահպանական կառավարման պլան(ներ), որը պետք է կազմվի և ընդունվի ՀՍՆՀ-ի կողմից սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման I.E.1.(ա) Բաժնի համապատասխան, Ղեկավար ձեռնարկի և ԲՍԿԾ համաձայն,

որոնք բոլորը Բանկի համար բավարար են՝ սահմանելով, ի թիվս այլոց՝ (i) հնարավոր բնապահպանական ռիսկերի կառավարման և մեղմման առանձին միջոցառումները, (ii) նվազեցնում և/կամ չեզոքացնում են Ծրագրի շրջանակում միջոցառումների իրականացման հետ կապված՝ շրջակա միջավայրի վրա անբարենպաստ ազդեցությունները, (iii) մոնիթորինգի և հաշվետվողականության մեխանիզմները՝ ապահովելու միջոցառումների պատշաճ իրականացումը և կանոնավոր հետադարձ կապ դրանց պայմաններին համապատասխանելու վերաբերյալ, ինչպես նաև Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ դրանց հնարավոր փոփոխություններով և լրացումներով:

9. «Ընդհանուր Պայմաններ» նշանակում է «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառությունների համար ընդհանուր պայմանները»՝ թվագրված 2012 թվականի մարտի 12-ով, սույն Հավելվածի II Բաժնում սահմանված փոփոխություններով:

10. «Իրականացման համաձայնագիր» նշանակում է սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման I.A.1 Բաժնում նշված համաձայնագիր, որի համաձայն Փոխառուն ՀՄՆՀ-ին է տրամադրում Փոխառության միջոցները:

11. «Միկրոծրագիր» նշանակում է Ծրագրի Ա.1 Մասում հիշատակվող համայնքահեն ցանկացած ներդրում կամ միջոցառում, , որը համապատասխանում է Ղեկավար ձեռնարկում նշված ֆինանսավորման չափանիշներին:

12. Միկրոծրագրի համաձայնագիր» նշանակում է Ծրագրի Համաձայնագրի I. D. 1 Բաժնի (բ) կետում նշված ցանկացած համաձայնագիր:

13. «Գործառնական ծախսեր» նշանակում է՝ Ծրագրի իրականացման և մոնիթորինգի նպատակներով ՀՄՆՀ-ի կողմից կատարած հավելյալ ծախսեր, այդ թվում՝ գրասենյակային սարքավորումներ, կոմունալ ծախսեր, գրենական պիտույքներ, կապի միջոցներ, տպագրության և հրապարակման, գրավոր և բանավոր թարգմանության ծախսեր, երկրի ներսում ուղևորություն և օրապահիկ, ավտոմեքենաների ապահովագրություն և զննում, գրասենյակի և ավտոմեքենաների պահպանում և վերանորոգում և ՀՄՆՀ աշխատակիցների աշխատավարձերի մասը և առողջության ապահովագրավճարները, որոնք Ծրագրի համար հավելյալ են, ինչպես որոշվում է Բանկի կողմից (բացառությամբ Փոխառուի քաղաքացիական ծառայողների համար որևէ աշխատավարձերի) և Ծրագրի իրականացմանը, կառավարմանը և մոնիթորինգին ուղղակիորեն առնչվող այլ ողջամիտ և անհրաժեշտ միջոցառումներ, որոնք կարող են տարեկան կտրվածքով համաձայնեցվել Բանկի հետ:

14. «Գործառնական ձեռնարկ» նշանակում է ՀՄՆՀամսաթվի ձեռնարկը, որը հիշատակվում է Ծրագրի համաձայնագրի I. B. 1 Բաժնում, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ Բանկի համաձայնությամբ, ներառյալ՝ Ծրագրի Համաձայնագրի I.B.2 Բաժնում նշված վերանայումը:

15. «Գնումների ուղեցույց» նշանակում է՝ 2011 թ. հունվարի (2014 թ. հուլիսին վերանայված) «Ուղեցույց. ՎՋՄԲ փոխառությունների և ՄՋԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակում Համաշխարհային բանկի Փոխառումների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ»:

16. «Գնումների պլան» նշանակում է Ծրագրի համար Փոխառուի՝ 2015 թ. հունվարի 29-ի ամսաթվով և Գնումների ուղեցույցի 1.18 կետում և Խորհրդատուի ուղեցույցի 1.25 կետում հիշատակված գնումների պլանը, որը ժամանակ առ ժամանակ վերանայվում է՝ նշված կետերի դրույթների համաձայն:

17. «Ծրագրի համաձայնագիր» նշանակում է Բանկի և ՀՄՆՀ-ի միջև սույնի հետ նույն ամսաթվի համաձայնագիր, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել և այդ ժամկետն ընդգրկում է Ծրագրի համաձայնագիրը հավելյալ բոլոր լրացումները և համաձայնագրերը:

18. «Ծրագիրն իրականացնող հանձնաժողովներ» կամ «ԾԻՀ»-եր նշանակում է համայնաքահեն ընտրված կազմակերպություն, որը ներկայացնում է համապատասխան Ընդունելի շահառուին՝ կապված որևէ Միկրոծրագրի հետ և ՀՄՆՀ-ին աջակցում է Միկրոծրագրի իրականացման հարցում:

19. «Տարաբնակեցում» նշանակում է հողի հարկադիր առգրավում, որի հետևանքով՝(i) կենսամակարդակը կրում է բացասական ազդեցություն կամ (ii) ծագում է իրավունք, սեփականության իրավունք կամ մասնակցություն որևէ տան, հողի (այդ թվում՝ շինությունների, գյուղատնտեսական նշանակության հողի և արոտավայրի) կամ որևէ այլ հիմնական միջոցի նկատմամբ կամ շարժական գույք է ձեռք բերվում կամ տիրապետվում, ժամանակավորապես կամ մշտապես կամ (iii) արտադրական ակտիվների հասանելիությունը կրում է ժամանակավոր կամ մշտական բացասական ազդեցություն կամ (iv) գործունեությունը, մասնագիտությունը, աշխատանքը կամ բնակավայրը կամ բնական միջավայրը կրում է ժամանակավոր կամ մշտական բացասական ազդեցություն:

20. «ՏԲՇ» նշանակում է Բանկի համար ընդունելի՝ 2014 թ. հոկտեմբերի 29-ի տարաբնակեցման քաղաքականության շրջանակ, որը կազմվել և ընդունվել է ՀՄՆՀ-ի կողմից և Բանկի կողմից հաստատվելուց հետո՝ 2014 թ. հոկտեմբերի 31-ին հրապարակվել, որը հիշատակվում է սույն Համաձայնագրի I. C.1. (բ) Բաժնում՝ սահմանելով ազդակիր անձանց Վերաբնակեցման և փոխհատուցման պայմանները և ուղղություն ցույց տալով Ծրագրի շրջանակում ՏԳԾ-ների կազմման և իրականացման վերաբերյալ՝ պահանջվելու դեպքում:

21. «ՏԳԾ»-ներ նշանակում է որևէ որևէ վայրին վերաբերող տարաբնակեցման գործողությունների ծրագիր, որը ՀՄՆՀ-ի կողմից պետք է կազմվի ՏԲՇ համաձայն և հաստատվի Բանկի կողմից՝ սույն Համաձայնագրի 2-րդ Լրացման I. C.1 (բ) Բաժնի համապատասխան:

22. «Ենթածրագիր» նշանակում է Ծրագրի Բ.1 Մասում հիշատակված Ենթածրագրի ծրագրի շրջանակում որոշակի միջահամայնքային կամ մի շարք համայնքների ներգրավմամբ միջոցառում, որը համապատասխանում է Ղեկավար ձեռնարկում սահմանված չափանիշներին:

23. «Ենթածրագրի համաձայնագիր» նշանակում է Ծրագրի համաձայնագրի I. D. 1 (դ) Բաժնում հիշատակված համաձայնագրերից ցանկացածը:

24. «Վերապատրաստում» նշանակում է՝ Ծրագրի շրջանակում վերապատրաստման միջոցառումների իրականացման համար կրած ծախսերը, այդ թվում՝ տեղացի վերապատրաստվողների և դասընթացավարների ուղևորության ծախսեր և օրապահիկներ, ուսումնական այցերի և աշխատանքային սեմինարների ծախսեր, հարմարությունների և սարքավորումների վարձակալության ծախսեր, ուսումնական նյութերի և հարակից պարագաների ծախսեր, տարեկան բյուջեների հիման վրա, որոնք բոլորն էլ համաձայնեցվում են Բանկի հետ:

Բաժին II. Ընդհանուր պայմանների փոփոխություններ

Սույնով Ընդհանուր Պայմանները փոխվում են հետևյալ ձևով.

1. **Բովանդակության մեջ** Բաժիններին, Բաժինների անվանումներին և Բաժինների համարներին կատարվող հղումները փոփոխվում են ստորև ներկայացված փոփոխություններն արտացոլելու համար:

2. Բաժին 3.01. *(Սկզբնավճար)* փոխվում է հետևյալ բովանդակությամբ.

«Բաժին 3.01 Սկզբնավճար՝ պարտավճար

(ա) Փոխառուն Բանկին վճարում է Փոխառության գումարի գծով սկզբնավճար՝ Փոխառության համաձայնագրում նշված դրույքաչափով («Սկզբնավճար»):

(բ) Փոխառուն Բանկին պարտավճար է վճարում Փոխառության չառհանված մնացորդի նկատմամբ՝ Փոխառության համաձայնագրում սահմանված դրույքաչափով («Պարտավճար»): Պարտավճարը հաշվեգրվում է Փոխառության համաձայնագրի ամսաթվից 60 օր հետո մինչև համապատասխանող ամսաթվերը, որոնց ժամանակ Փոխառուի կողմից Փոխառության հաշվից առհանվում կամ չեղյալ են հայտարարվում գումարները: Պարտավճարը ենթակա է վճարման յուրաքանչյուր Վճարման Ամսաթվին՝ կիսամյակային կտրվածքով՝ ժամանակաշրջանի վերջում:»

3. Հավելվածում, Սահմանումներում, Բաժինների համարների և կետերի համապատասխան բոլոր հղումներն, ըստ անհրաժեշտության, փոխվում են՝ արտացոլելու վերոնշյալ 2-րդ կետի փոփոխությունը:

4. Հավելվածը փոխվում է՝ լրացնելով նոր 19-րդ կետ «Պարտավճար»-ի հետևյալ սահմանմամբ և համապատասխանաբար վերահամարակալելով հաջորդ կետերը.

«19. «Պարտավճար» նշանակում է պարտավորության վճար, որը սահմանվում է Փոխառության համաձայնագրում՝ 3.01(բ) Բաժնի նպատակով:»

5. Հավելվածի վերահամարակալված 49-րդ կետում (սկզբում՝ 48-րդ կետ) «Սկզբնավճար»-ի սահմանումը փոխվում է՝ Բաժին 3.01 –ին հղումը փոխարինելով 3.01 (ա) կետին հղումով:

6. Հավելվածի վերահամարակալված 68-րդ կետում (սկզբում՝ 67-րդ կետ) «Փոխառության վճարման» սահմանումը փոխվում է հետևյալ բովանդակությամբ.

«68. «Փոխառության վճարում» նշանակում է ցանկացած գումար, որ Փոխառության կողմերի կողմից Իրավաբանական համաձայնագրերի կամ սույն Ընդհանուր պայմանների համաձայն ենթակա է վճարման բանկին, ներառյալ՝ (սակայն չսահմանափակվելով) Փոխառության Առհանված մնացորդը, Տոկոսագումարը, Սկզբնավճարը, Պարտավճարը, Դեֆոլտի Տոկոսադրույքով տոկոսագումարը(եթե կա), կանխավճարի հավելավճարը, Փոխարկման կամ Փոխարկման վաղաժամկետ դադարեցման գործարքի վճարը, Փոփոխական սպերդի ֆիքսման վճարը(եթե կա), Առավելագույն տոկոսադրույքի քեփի կամ տոկոսադրույքի քոլարի, կամ սխալմամբ կատարված ֆինանսական գործարքից առաջացած մասի փոխհատուցում, որը ենթակա է վճարման Փոխառուի կողմից:»

7. Հավելվածի վերահամարակալված 73-րդ կետում (սկզբում՝ 72-րդ կետ) «Վճարման Ամսաթվի» սահմանումը փոխվում է՝ «տոկոսագումար» բառից հետո հանելով «է» բառը և լրացնելով «և Պարտավճարը են»: